

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՒ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՒՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev. Pere G. Kalemkarian Mechitaristengasse
Nº 4 Vienne

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուշկարիոյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Առատաստեղծութեան » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Համակ դրամ եռալն դրկել հետեւեալ հասցեով
ԽՍԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԻՐԱՎՈՒՆԿ, ԼՐԱԳՐՈՅ ՎԱՌՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).
Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեալ գրութիւն
էս յեն դրկուի եւ յարմար դաստիարակ-
ները միայն կը հրատարակուին աւանդ-
շովին կաւ մասամբ:
Իրանդեան տղը 20 սանթիմ. երե-
ֆեն աւելի անգամներու համար 20 0/0
գնել կը չիկնի:

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Ա.

Ռուսիա թող տալէ յետոյ որ
թրքահայութիւնը արեւան ծովու
մէջ լողայ Հայաստանի մէկ ծայ-
րէն միւսը, ուստի հայութեան կու-
տայ բարոյական մահացու հար-
ուած մը, դպրոցական ծանօթ
խնդրոյն մէջ իր կարգադրութիւն-
ները մինչեւ իրենց տրամաբանա-
կան վերջին հետեւանքներովը ման-
րամանաբար գործադրելով: Այն
տխուր լուրերը, զորս մեր նա-
խորդ թուով հրատարակեցինք
«Կովկասի Դպրոց» վերնագրին
տակ Բիշոփայիւնէ առնելով, կու-
գան հատ մըն ալ աւելցնել այն
ապացոյցներուն վրայ որոնք ալ
տարակոյս չեն ձգել թէ ուսու-
կան քաղաքականութեան մէջ գը-
ծուած է հայ տարրին փճացման
հետամուտ ըլլալու ծրագիրը: Այս
իրողութիւնը որքան ալ ցաւալի և
մեղի յուսահատութեան մօտեցնե-
լու չափ սոսկալի ըլլայ, պէտք է
որ յայտարարուի, բացէ բաց ը-
սուի հայ ժողովրդին որ ալ իր
վիճակին և զինք չըլլապատող դը-
ժուարութեանց և դժբաղդու-
թեանց պայծառ գիտակցութիւնը
ունենալու է, որպէս զի ըստ այնմ
գիտնայ իր ընկիւրը: Այո՛, պէտք
չէ որ ինքզինքնիս խաբենք. եր-
կու ահարկու թշնամիներու միջեւ
մնացած ենք, թուրքին ու ռու-
սին. առաջինը ուղղակի հրէ և
սրէ կանցնէ մեզ, իսկ երկրորդը
բարոյապէս, կամաց կամաց և ա-
ւելի ապահով միջոցներով ջնջել
ծրագրած է մեզի: «Եւրոպական
ներդաշնակութիւնը», աւելի ճիշդ
բառով, եւրոպական տէրութեանց
իրարու դէմ գէթ առ այժմ պա-
տերազմելէ սաստիկ խրոչումն ալ
մեզի ու է յոյս չի թողուր որ
Անգլիայէ կամ ուրիշ տեղէ մը օգ-
նութեան ձեռք կարկառուի մեզի:
Այս վիճակին մէջ, մեր կար-
ծիքով, պարզամտութիւն մըն է
մտածել թէ մենք մեր ներքին ու-
ժերու կիրառութեամբ, շարժում
ներ և ցոյցեր ընելով կրնանք յա-
ջողիլ եւրոպական քաղաքականու-
թիւնը խտրողները իր արգի, մե-
զի այնքան անպատաս և ուղղութե-
նէն:

Քաղաքականութիւնը կրնայ փո-
խուիլ անշուշտ, և մինչեւ իսկ մէկ
օրէն միւսը, և այդ յոյս մը, միւ-
թարութիւն մըն է մեզի համար.
սակայն մեր յեղափոխական շար-
ժումները ինքնին անբաժանալի պի-
տի ըլլան միշտ, այդ փոփոխու-
թիւն առաջ բերելու հարկը հազա-
րաւոր նահատակներու ջարդէն ետ-
քը պէտք է որ ատոր համոզուած
ըլլանք:
Մենք ոչ միայն պատրաստ դրտ-
նուելու ենք պատեհ ժամուն օգ-
տուելու քաղաքականութեան այն
ենթադրելի փոփոխութեանէն— ինչ
որ ներքին ուժի մը լուրջ կազմա-
կերպութեամբ միայն կարելի
է—այլ և ամեն բանէ առաջ ջա-
նալու ենք ոչ ոքի անսխալի, գրու-
նել այն միջոցները որով կարելի
ըլլայ Ռուսիոյ արդի տրամադ-
րութիւնները մեզ նկատմամբ որ-
քան հնար է, նպաստաւոր փո-
փոխութեան մը ենթադրելու ուսու-
նալով ինքիւր է թէ մենք յա-
ջողելու յոյս ասանկ ձեռնակի մը
մէջ: Ինքիւրը այնքան կենսական
է, ուստի կան հայատեանց քաղա-
քականութիւնը մեզի համար այն-
քան ազեղանքի հետեւանքներու յան-
գիլ կը սպառնայ, որ ներքին չէ
մեզի յաջողութեան յոյսին չափը
նկատի առնելով՝ ընկրկիլ Ռուսիոյ
համակրութիւնը կամ գտնէ ան-
տարբերութիւնը շահելու միտող
ուղղութեան: Եթէ նոյն իսկ բը-
նաւ յոյս չկենար յաջողութեան
—ինչ որ տակաւին ապացուցանե-
լի կը մնայ—պէտք է որ մահ-
ուան հետ կառուող մարդու մը ան-
հաշիւ թափովն իսկ կուտան մը
գտնել փորձէնք հոն, ուր թէեւ
հաւանականութիւն է, յոյս չկայ,
սակայն կարելիութիւն կայ մեր
վնասածը գտնելու:
Բաւական է որքան երեւակա-
յութեամբ ապրեցանք, ցնորքնե-
րու ետեւէ վաղեցինք. ատոր ար-
գիւքները մէջտեղ են, իրական,
չօշափելի, սարսափելի. անհրաժեշտ
հարկ է որ ալ բիշ մը զրական
մարդիկ ըլլանք. իրականութիւնը
դիտենք, տեսնենք զայն իր բոլոր
տխուր գոյներով:
Զնորք է յուսալ որ հայկական
խնդիրը երբեք գահացուցիչ լու-
ծում մը գտնէ հակառակ Ռուսի-
ոյ, որուն հակառակութիւնը, միշտ,
նոյն իսկ եթէ օր մը Հայաստան
ինքնօրէն վարչութիւն մը ձեռք
ձգէ, մեր գլխին Դամոկլէսի սու-
րին նման կախուած պիտի կենայ,
ահարկու, սպառնալից:

Լըվաժիտ մարդու համար բնաւ
տարակոյս չի կայ թէ պարտական
ենք ջարդին կառավարութեան հա-
կառակութիւնը չեղորացնելու աշ-
խատիլ ամեն հնարաւոր միջոցնե-
րով և զոհողութիւններով. գտնէ
փորձել պարտինք, որովհետեւ
այդ փորձ մը պիտի ըլլայ ներկայ
վտանգաւոր դիրքէն ազատելու,
ուր մէկ կողմէն թուրքին սուրը
և միւս կողմէն Ռուսիոյ բռնացը
բարձրացած են՝ ամէն վայրկեան
մեր գլխին իջնելու:
Ունի՛նք միջոցներ փորձը ընե-
լու համար:

ԸՆԿԵՐԹՈՅ ԹԻՇԱՏԱԿԻՆ ԵՒ ԽԱՍԱՐ ԲԱՄԲԱԿԻՆԵԱՆ (ՀԱՐԱՐ)

Երեկ' Կ' Բ' Գ. ընկե՛ր, որ գիտցար
այդիկ
Սկզբունքներդ բարձր հոսանքով,
Սրտանախնդիր տուն, տեղ, ընտանիք,
Զոն տուր քո կեանք, վե՛ն գաղա-
փարով:
Մութ, մրուայ բանի ո՛չ անուր,
չորան,
Ո՛չ անգութ բութի խոժոյղ ջա-
շարանի,
Ո՛չ էլ ոսկերի յոջօջ կտրատելի,
Երե՛կ, ջրկնէցին երկաթ քո կամի:
Սո՛ւրբ ազատութիւն՝ քո վե՛ն նպասակ,
Որի՛ն գիտէիր զո՛նեղ հանգիստ, քոն,
Որ միշտ երգէիր հոգովդ անապակ,
Որ քաղաքի անվախ, անկրակ:
Ընկե՛ր էրի՛նք մենք անուր երդումով.
Գաղափարների երկրներն անծայր
Պիկե՛ր էրի՛նք մեր արեւն աւերակող,
Թիշահանների իրար զոյգ ծրար:
Երկի՛նք միշտ անգութ, քաղցը կը
անողոք.
Ճակասագրական հասել կը օրհնա,
Աղբակի դաշի կոխն արիւննուշ
Վերջ պիտի դրնէր կեանքի ճորտահաւ:
Ահաւոր վայրկեան, հրաժեշտի սե՛ւ
ժամ
Անդունդ գահավիժ բացաւ մեր միջեւ
Քեզ վիճակեցաւ պրտակ անբաւար,
Ինձ բաժին մընաց վիշտ, սուգ, օ-
րե՛ր սեւ:
Սեւ ու սուգ օրե՛ր, անմահ եղիպար.
Բիւր յիշատակացի կոյրն ծալ ի ծալ
Եւ միշտ պրպտեմ, ուր տեսնեմ Զար-
մայր,
Նրնելի ափին՝ Գո՛ն, արիւնքաւայ:
Սիրտս փրփրի, հոգիս խոռովի.
Ծրուեալ անկեացի, շիրմիդ տա՛ն հաւ-
քոյր,
Խաչար մը գլխիդ, կարիւր մ'արտա-
սուխ,
Այս իմ ուխտս անաւ, վրե՛ժ մահա-
րոյ՛ր...
ԶԱԽԵՆ
Վառնա, 31 յունիս 98

«ՀՐԱՆԴ» ԻՆ

(Շար. Աստուրի քիսէ և վերջ)
Եւ գիտեմ որ Արփար ինքն իսկ
պահանջեց որ լուրջ քննութիւն բաց-
ուի, պատուոյ առեանի առջեւ ամէն
բան կշռուի, եւ յանձն առած էր քաշ-
ուիլ՝ եթէ երբեք զրպարտութիւնը ա-
պացոյցով հաստատուէր: Հրանդ չե-
րեւցաւ: Հեռուն, այո՛, մութին մէջ,
ասդին անդին, կը խօսէր, կը զրպար-
տէր, եւ երբեք չեկաւ իր ըսելիքը ը-
սելու հոն ուր միմիայն պէտք էր խօ-
սէր: Այս պարագաները զիս ցնցեցին:
Վատութիւն համարեցի լուռ մնալ այս
կարեւոր երեւոյթին առջեւ: Մաղիկին
համար գրեցի յօդուած մը ուր անկեղ-
ծօրէն կ'արտայայտէի ինչ որ այս ա-
մօթալի դէպքը ինձի կը ներշնչէր: Այդ
յօդուածս չերեւցաւ, որովհետեւ գրա-
վենութիւնը արգիլեց (արդէն եթէ Ար-
փար, Բաշախան և Օտեան ալ՝ ըս-
քողեալ բացատրութիւններով ինքնա-
պաշտպան յօդուածներ հրատարակեցին
Հայրենիքին մէջ, այդ յօդուածները
կրցան հրատարակել անոր համար որ
զրաքննիչին չցուցուցած զանոնք մա-
մուլին տալու յանգցութիւնը ունե-
ցան, եւ երկու օր հազիւ անցած, զը-
րաքննական գիւտնը եղեւութիւնը ի-
մացածին պէս, այդ նիւթին վրայ գըր-
ուիլը խտրու արգիլուեցաւ: Իսկ թէ
Հրանդ ի՛նչպէս գիտէ իմ այդ անտիպ
յօդուածիս պարունակութիւնը, ահա-
ւասիկ. —Որովհետեւ կ'ուզէի կարծիքս
յայտնել այդ դէպքին վրայ եւ զրաքն-
նութեան արգելքով հայ հասարակու-
թեան իմ մտածելու եղանակս պարզե-
լէ խափանուեցայ, խորհեցայ զրաժս
կարգաւ կեդրոնական վարժարանի բարձ-
րագոյն կարգին, գրական պատմու-
թեան դասին. ներում խնդրեցի աշա-
կերտներէն միմիայն անգամ մը դասէս
դուրս ելլելու համար, եւ ներկայա-
ցուցի իրենց այդ խնդիրը՝ անոր ներ-
շնչած ընդհանուր գաղափարներուն
համար: Ամբողջ դասարանը մտիկ ըրաւ
երկիւղած լուռութեամբ: Դասին աւար-
տէն յետոյ, աշակերտ մը եկաւ ուղեց
զրաժս, եւ ետքէն իմացայ որ տարեր
Հրանդին առջին դրեր է, դասի ասեմ,
աշակերտներու առջեւ: Հրանդ կար-
գացեր, կարմրեր, եւ լուիկ մնչիկ յօդ-
ուածը ետ դարձուցեր է: Այդ աշա-
կերտը, Ա. Հ., կրնայ վկայել: Եւ այդ
յօդուածին մէջ Արփարին համար հայ
Միտապօ կամ հայ Ժիւլ Ֆաւլոն չեմ ը-
սած երբեք. ըսած եմ թէ ժողովուրդը
չատ անգամ իրեն համար աշխատողնե-
րը սխալ դատելու կը մղուի տենդոտ
չըլաններու մէջ, եւ օրինակ տուած
եմ Միտապօն եւ Ժիւլ Ֆաւլոն, այդ
մեծ հայրենասէրները, որոնք մատնի

հոգակուած են:—Ահա ինչպէս Հրանդ կը պատմէ իր պատմութիւնները:

Թէ Բարիզ գալէս ի վեր ինչ ըրած կամ ինչ գրած եմ, Հրանդին ոչ սրտին ոչ ալ մտքին տրուած է ըմբռնել եւ գնահատել: Համարձակել է սահեցնել թէ հայերէն յօդուածներս «արիւնտա քստմնելի օրերը» մոռցնելու ձգտում ունին, մինչդեռ անխորհուրդ եւ անհաշիւ նորանոր փորձերով արիւնտա օրերը կրկնել չտալու համար ինքնամփոփման, գիտակից եւ ընդարձակ զօրացման, խուլ եւ ամուր վերանորոգման հրաւերներ են անոնք: Իսկ կարծելը թէ Հայոց վրայ իմ ֆրանսերէն հրատարակութիւններս ընթերցողներու չշնչու համար եղած գործեր են (մինչդեռ իւրաքանչիւրէն 1000 կամ 500 օրինակ ձրի ցրուած եմ ֆրանսական անձնատրութեանց), եւ կարծելը թէ անոնք անձնական փառաւորման համար յօրինուած են (մինչդեռ այդ գործը կատարելու համար իմ անձն ուրացած, իմ ճշմարիտ գործունէութիւնէս, իմ բանաստեղծի կեանքէս հրաժարած եմ), ասոնք այդ ողբալի մարդուն մը տածելու եւ զգալու եղանակը ցոյց կուտան: Բոլորի բառը չէ հասկցած խեղճը. կը կարծէի որ այսչափ պտենէ ի վեր գոնէ քիչ մը ֆրանսերէն սորված ըլլար: Անաղու Ֆուանս գիտ անուանեց Բոլորի եւ իմ Բարիզի կեանքը՝ էկզիլ, որովհետեւ ուրիշ կերպ չէր կրնար ըսել. ամէն այն անձերը որ արիւնտաւ երկրէ մը ուր իրենց ազգը կը տառապի՝ կը հեռանան ապօրէն միջոցներով եւ այլ եւս չեն կրնար հոն դառնալ, վտարանդիներ, աքսորի մէջ ապրողներ կ'ըլլան: Հրանդը ինքն ալ, ես ալ, ուրիշ շատեր ալ քոլոնիալներ են: Եւ տարօրինակ չէ՞ որ այդ նախադասական ճառին մէջ որով ֆրանսայի ամենէն մեծ գրագէտներէն մէկը պատուեց հայ ժողովուրդը եւ անոր խոնարհ ներկայացուցիչը, Հրանդ միայն քոլոնիալ բառը տեսած ըլլայ եւ տեսնել կրցած կամ ուզած չըլլայ ուրիշ շատ մը բառեր որոնք արդահատանք յայտնելէ շատ հեռու են, որոնցմով ես հպարտ եմ, որոնցմով հայ ժողովուրդն ալ կրնայ հպարտ ըլլալ:

Ահա ամէն ինչ որ ունիմ ըսելու: Դերս աւարտած կը նկատեմ. կը կրկնեմ:

ՍԱՐԿԱՒԱԳ

(16)

Խնդրելով որ այդ ամենը հաղորդէ յանձնաժողովներին անդամներին, պատուիրեց որ իւր կողմից ասէ նաեւ իւր ընտրութեաններին, ընկերներին եւ համախոհներին, որպէս զի նոքա հանգիստ լինին, որովհետեւ ոչ մի աւելցող խօսք դուրս չի գալ նորա բերանից, չ'յուսահատուեն եւ աւելի եւս հոգանող շարունակեն այն սրբազան գործը, որի վերջնական յաջողութիւնը անտարակուսելի էր համարուած: «Առանց ազատութեան կեանքը ոչինչ է: Առանց երկիրի եւ տարակուսութեան, ամեն զոհողութիւն յանձն առնելով, համարձակ առաջ գնացէ՛ք ա՛յն ճանապարհով, որը արդէն բացուած է. եւ մի՛ խնայէ՛ք ձեր ուժերը ստրկացած եւ գերի եղած հայրենիքի փրկութեան համար»—սոքա էին վերջին կտակի խօսքերը, որոնցմով Լեւոնի գիմում էր իւր աւելի բազմաթիւ ընկերներին եւ համախոհներին: Նաեւ այն բոլորին երբոր նորա գլխի վերայ արդէն կախուած էր օրհասական չուանը, մեծ հայրենասէր նահատակը զբաղուած էր ոչ թէ իւր գոթաղջ վիճակով, այլ միմի-

նեմ «Վերջին բառ»իս մէջ ըսածս: Ինչ ալ գրեն, ով ալ գրէ, ա՛լ բառ մը ունիմ աւելցնելու: Ոչ պէտք ունիմ, ոչ փափաք, ոչ ժամանակ: Պիտի սպասեմ ռոմաններուն:

ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆԵԱՆ

ԼՐԱՔԱՂ

Թիւրք կառավարութիւնը ճիշդ թիւերի Շարգիյէի տէր եւ տնօրէն Տ. Տիգրան Ճիւլէլեանի արտօնութիւն տուել է Սուրհանդակ անուն օրաթերթ մը հրատարակելու, ազգ. եւ քաղաքական, որուն գինը 10 փարա պիտի ըլլայ: —Բիշուանդիում կը դրէ. «Պը լսնք թէ Ս. Պատրիարք Հայրն իլվիւրի անորակելի ոճիւններուն առթիւ առ իլվիւրի Առաջնորդարանն ուղղած նամակին մէջ, այս տխուր գործին նկատմամբ բացատրութիւն պահանջելէ եւ հրահանգ տալէ զատ, մանրակրկիտ տեղեկութիւն խնդրել է իլվիւրի մէջ գոյութիւն ունեցող միւս որբանոցներուն վիճակին եւ վարչակարգին նկատմամբ: Ն. Սրբազնութիւնն այս առթիւ նորէն նամակ մը գրել է Երուսաղէմի Ս. պատրիարք Հօր, տեղեկութիւն խնդրելով քաղաքին գերմանական Որբանոցին նկատմամբ, որուն վերաբերեալ սրտաշարժ գէպքի մը պատմութիւնն երեւցաւ նախընթաց շաբթուն Բիշուանդիումի մէջ: Որչափ իմացած ենք մեր թղթակիցներէն, այս գերմանական որբանոցներու Տնօրէնութիւնը բացարձակ յայտարարել են թէ իրենց յանձնուած որբերն իրենց ուղղած կերպով պիտի պահեն ու կրթեն, համար պիտի չիտան հայ կրօնական իշխանութիւններուն, եւ հայ կրօնաւոր ալ պիտի չընդունին, ո՛չ ալ հայ որբերն Հայոց եկեղեցի կամ դպրոց պիտի զրկեն՝ ըստ հայ. եկեղեցւոյ սովորելու կրօնային ուսումը:

այն իւր թշուառ հայրենիքով եւ այն սրբազան գործով, որին ամբողջապէս զոհ էր բերել իւր անձը եւ որի համար նա անտրտուն զիմում էր գէպի կախաղան:

Լեւոնու հարց ու փորձը, որը կատարուում էր այդ առիթով կազմուած յատուկ յանձնաժողովում, տեւեց մէկ ամսից աւելի: Երբոր նորան երես առ երես կանգնեցին Դիմիտրի հետ, նա թքեց մասնիշի երեսին եւ հրաժարուեց որեւիցէ բացատրութիւն տալուց: Բոլոր ժամանակը նորան առաջարկուած էին հազարաւոր հարցեր ինչպէս համախոհների այնպէս եւ գործի վերաբերութեամբ, — բայց նա այդ բոլոր հարցերին պատասխանում էր միայն լուռութեամբ: Նորա լեզուն բացուում էր միայն այն ժամանակ՝ երբոր առիթ էր ներկայանում խօսել իւր ազատութեան գաղափարների մասին, այդ ժամանակ նա կենդանի զոյներով նկարագրում էր իւր հայրենիքի բոլոր չարանքները եւ տանջանքները, դատապարտում էր տաճկական հարստահարութիւնները եւ բռնակալութիւնը, դուշակում էր նորա մօտաւոր վախճանը եւ այդպիսով փոխանակ դատապարտելի կատարում էր անխնայ եւ անկաշառ դատապարտողի դերը:

Այսու ամենայնիւ, Ս. Պատրիարքը նոր գիմումներ ընկու կողմն է: Անշուշտ նորին Սրբազնութիւնն ուղղակի այս Տնօրէնութեանց կեդրոնին ալ պիտի գիմէ, դրամը տըւող բարերարներուն, բարեսէրների, որոյ մեծագոյն մասը տեղեակ չէ իրենց անունով ի դործ դրուած կեղծաւորութեան:

—Բարիզի լրագրներում մէջ կը կարդանք թէ Նուպար բաշա վերաբուժական ծանր գործողութիւն մը կրեր է, զոր հարկաւոր ըրած էր ստամոքսի քաղցկեղ մը: Գործողութիւնը յաջողութեամբ կատարուած է, սակայն Եգիպտոսի նախկին նախարարապետին տարիքը եւ ֆիզիքական երկար տառապանքներ չպիտի թոյլատրեն իրեն այնքան շուտ ապաքինել որքան կը փափաքին իր բազմաթիւ բարեկամները:

—Երջանկայիշատակ Լուսինեան խորէն Սրբազանի գերեզմանին վրայ մահարձան մը պիտի կանգնուի, որուն շինութիւնը ծանօթ ազգային մը յանձնարարած է հայ արուեստագէտի մը:

—Կը յիշեն ընթերցողները թէ Թիֆլիսի հայոց աւագ եկեղեցիին բակին մէջ սկսուած թանգարանի մը շինութիւնը ընդհատուեցաւ առժամապէս կառավարական որոշումով մը: Կառավարութիւնը արտօնել է այժմ վերսկսել շինութեան:

—Փ. Պօլսէն կը դրեն Գոռնիէ տէ. Պալաւնի. Բաղաքիս հայ առաջնորդ. փոխանորդ Հայր Ռուս. ճուղիւնի թաղման հանգէսին առթիւ, հայ հասարակութիւնը շատ զգածուեցաւ այն համակրութեան նշաններէն զոր պուկար կղերը ցոյց տուաւ յարգելի հանգուցեալին: Այսպէս՝ ոչ միայն Ն. Գեր. Նաթանաէլ եպիսկոպոսի պատուիրակի պուկար քահանան եկեղե-

ցիին մէջ Աւետարան կարգաց հանգուցեալ եկեղեցականին մարմինն վրայ, այլ եւ, երբ յուզարկաւորութեան թափօրը պուկար աւագ եկեղեցիին առջեւէն կանցնէր, Գերապատիւ Արքեպիսկոպոսը եկեղեցական զգեստով եւ շրջապատուած իր կղերէն, դուրս եկաւ եւ նոյնպէս հանգուցեալին վրայ Աւետարան կարգաց, այս կերպով քրիստոնէական եղբայրութեան փայլուն օրինակ մը տալով: Ասանկ բան մը չի տեսնուիր յոյն կղերին կողմէն որ սակայն կը հաճի երբեմն Հայկական եկեղեցին «բոյր-եկեղեցի» կոչել, Ս'եր քաղաքին յոյն կղերին ընթացքը չը համաձայնիր այն սովորութիւններուն որոնց ասանկ առիթներու մէջ կը հետեւին Տիեզերական (յոյն) Պատրիարքարանը եւ ընդհանրապէս Կ. Պօլսոյ յոյն կղերը որոնք նմանօրինակ պարագաներու մէջ երբեք չեն թերանար վերջին յարգանքը տալու ոչ միայն հայ կղերին վախճանած անգամներուն, այլ եւ նոյն իսկ աշխարհական ամէն նշանաւոր հայու:

—1897 տարւոյ Թիֆլիսի բնակիչներուն թիւն հղած է 162,624 հոգի, որոնց 30606 ռուս են, 61688 հայ եւ 33421 վրացի: Մնացածը կը բաղկանայ մօտ 1000 նեկէնիզ գանազան փոքրաթիւ ազգութիւններէ:

—Վեհ կաթողիկոսը Լուսաւորչի նշխարաց գիւտին օրը հաճել է եպիսկոպոս ձեռնադրել Տ. Մաղաքիա Տէրունեան, Տ. Յովսէփ Սարաճեան եւ Տ. Սահակ Այվատեան վարդապետները, երեքն ալ թրքահայ:

—Ահաւասիկ անուններն այն չորս քաղաքներուն որոնք քարո ռուս բանակին մէջ կը ծառայէին եւ այժմ վերընդունուած են Պուկար բանակին մէջ:

Տեղակալ—գնդապետ Ռիսթօ Բաքօֆ անուանուած է Սրէտնա—Կօրայի՝ 21րդ. Կետեակազօրաց գունդին հրամանատարի օգնական:

Տեղակալ—գնդապետ Սթօյան Ֆիլիքօֆ անուանուած է Պոլինաքի՝ 3րդ. հետեակ զօրագունդին մէջ վաշտի հրամանատար:

Հարիւրապետ Իվան Սիմէոնօֆ անուանուած է 24րդ. Կետեակ զօրագունդին մէջ գումարտակի հրամանատար:

Հարիւրապետ Նէտէլքօ Վասիլէֆ անուանուած է 6րդ. Թնդանօթաճիզ զօրագունդին մէջ մարտկոցի հրամանատար:

ՎԵՐԱԴԱՐՁ

Մեծ գոհութեամբ կը ծանուցանենք թէ իրաւունքի խմբագիրներէն մին, Տ. Բակըր Գուրպէթեան, որ հինգ ու կէս ամիս առաջ արտաքսուած էր Պուկարի այն՝ արտաքին քաղաքականութեան վերաբերող պատճառներով, երկու օր առաջ վառնա վերադարձաւ կեդրոն. կառավարութեան արտօնութեամբ:

ՎԵՐՋ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տարագրութեան տխուր օրերուն՝ Օտեսայի, Կալացի, Քէօստէնէի, Պուգ-րէի եւ Ռուսնուգի ազգայնոց կողմէ ինձ ցոյց տրուած համակրանքը՝ որ վշտաբեկ սրտիս սիրտին մ'ըլլալու բնոյթն ունէին, անմոռանալի յիշատակաց քանդակներ թողած են յիս։ Մանաւանդ զիս իրենց շնորհակալն մէջ պարփակող ազնիւ Տեառք ինքզինքս երախտապարտ զգալով, կուգամ հրապարակաւ իմ խորին շնորհակալիքս յայտնել։

Յ. ԳՈՒՐԳԵԹԵԱՆ
Վառնա, 3 յուլիս 1898

«ՇԱՐՈՒՄ»Ի ԱՐԳՈՑ ԽՄԲԱԳԻՆԵՐՈՒՆ

Ձեր 51րդ. թիւին մէջ ինծի ուղղուած տողերը կը պատկերացնեն ձեր պարտութիւնը եւ ձեր սրտի մորմոքը։ Ափսոս որ խոստովանութիւններդ շատ մութ է եւ ապաշինիչ անգոյն, այնպէս որ շատ քիչեր, գործին մօտէն տեսնելու թիւն ունեցողներ միայն կրնան զանոնք հասկնալ (*):

Հասկցածներդ չի հասկնալ մի ձեւացնէք, Պարոններ։ «Փախուստ»ի եւ «Սքողեալ փախուստ»ի տարբերութիւնը եւ ո՛րն աւելի կը ծուրլալը անկարելի է որ չհասկնաք։ Վերջինը աւելի կը ցոյցանէ ձեր թերութիւնը, ձեր ճակտին վրայ։

Եթէ ձեր փախուստէն, սքողեալ ըլլայ թէ ոչ, փնտրողը եւ ըլլայի, ձեր այս անգամուան խոստովանութենէն յետոյ, պարտաւոր պիտի զգայի ինքզինքս ձեզի ներելու։ Սակայն ձեր աններելի մաւնովքներէն փնտրողը ուրիշ մըն է, Պ. Թահմիսեանը։

Վտանգեցիք զինքը ու յետոյ խոստացաք զինք ազատելու ազնուութիւնը ունենալ։ Հիմա երկու ճամբայ միայն կայ ձեզի համար։ Կամ որոշ կերպով խոստովանեցէք որ ձեր խոստումը կեղծ էր ու վախճանով ձեր հակառակորդէն կը փախչէք զայն գործադրելէ, կամ, թողլով մէկ կողմ ձեր անհամ զաւէշները ու ծիծաղելի պատուականները, ձեր արգի պատասխանատուին պատասխանատուութեան տակ արտատպեցէք Շարժումի 14րդ. թիւին «Հայ դաւաճան մը» վերնագրով յօդուածը։

Ասով ա'լ պէտք չէք ունենար ոչ մականունիս «ց» տառին գործածութեան համար ներողութիւն խնդրելու, ոչ ա'լ «ցնոր տնօրէնութիւն» սպասելու հարկին տակ ձեր պարտութեան համար սիրտ-փանք փնտրելու։

Յ. Թ. ԹՕՎԱԿՅԱՆ

(*) Պատշաճ տեսանք յապաւել այս նամակին մէկ մասը, որ կատակախառն սուր եւ ծանր խօսքեր ուղղուած էին Շարժումի։ Պաշտօնակցական ներկատուներ չէին ներքի մեզ մեր սիրահաններուն մէջ ընդունիլ այդ խօսքերը, որոնք բուն խնդրին հետ ուղղակի առնչութիւն ալ չունէին։ Մաղթով ու կատակով չէ որ կը լուծուին կամ կը լուսարանուին այս տեսակ խնդիրներ։

«ՄԻՈՒԹԻԻՆ»

«Միութիւն»ի խմբագրութիւնը կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ երեք ամսուան համար դադրեցուցած է թերթին հրատարակութիւնը որուն Գ. տարեշրջանի առաջին թիւը լոյս պիտի տեսնէ յառաջիկայ սեպտեմբերի սկիզբը։

ՀԱՅ ՄՍՍՆԱԳԵՏՆԵՐ

Այս տարի խմբագրի համալսարանին իրաւագիտական ընթացքը աւարտել են Աւետիսեան՝ Թիֆլիսցի եւ Շիրեան Արսէն՝ Շուշեցի. իսկ բժշկական ճիւղը աւարտել են Տէր Միքայէլեան՝ Ազուլցի եւ եւ Գովիսեան Ս. Խաչքաղաքացի։ Նոյն քաղաքի արհեստագիտական բարձր դպրոցէն շրջանաւարտ ելած են Պէկղատեան Տիգրան՝ Կասապատ գիւղացի եւ Շիրեան Յովսէփ՝ Շուշեցի։ Անասնաբուժական դպրոցը աւարտած է Արդութեան Վլատիմիր՝ Թիֆլիսցի։ Օտեսայի համալսարանին իրաւաբանական ճիւղի այս տարուան հայ շրջանաւարտներն են Պուտուղեան՝ Կաղզուանցի եւ Քէլեան՝ Երեւանցի։ Եարոսլաւ քաղաքի Տիֆլիսցի իրաւաբանական լիկէոնը աւարտել են Այվազեան Սարգիս՝ Սոջիսցի, Ատովեան Գէորգ՝ Ջաքարթայցի, Թօքմեան Մկրտիչ՝ Ղալարցի, Առաքելեան՝ Շուշեցի, Նալբանդեան՝ Սիմֆերոպոլի։ Բէթէրապուլի արհեստագիտական վարժարանի շրջանաւարտներն են Ամբրոսեան Էմմանուէլ, Ամբրոսեան Նիկողայոս, Ճգնաւորեան Յարութիւն՝ Երեւն ալ Շուշեցի, Մատուրեան Պատուական Գարահունձ գիւղացի, Պաղեան Կոնստանդին՝ Թիֆլիսցի եւ Բիրպուտաղեան։ Բէթէրապուլի քաղաքային երկրաչափական դպրոցի շրջանաւարտներն են Ճանրեան, Ռոտմեան, Լադարեան, Սաչատուրեան եւ Ջօհրապեան։

Ա. Զ. Գ.

Վառնայի ազգ. երկու վարժարանաց հրապարակային քննութիւնք արգէն աւարտած ըլլալով՝ վիճակացոյցներու բաշխումը տեղի պիտի ունենայ, վաղը, կիրակի, կէս օրէն յետոյ ժամը 2 ին, Ս. Սարգիս եկեղեցոյ մէջ։

Պատիւ ունիմ ծանուցանել որ վարժարանս իր Բ. տարեշրջանը բոլորած ատեն, Ազգին կուտայ երեք աւարտականներ։

Արուսեակ Աբելեան, Վառնայի Բերրոնէ Գալէնտէրեան, Աղբնցի Երեւակ Քիւրքեան, Պոլսեցի։

Պատեհ առիթ մըն է ինծի շնորհակալ ըլլալու ինծի գործակից ուսուցիչներու, որոնք իրենց յանձն առած պաշտօնին մէջ, իրենց հմտութեան հետ իրենց սիրտը դրին։

Հիմնարկոշ-Տնօրէն

Կիւրքեան

Վառնա 2 յուլիս 1898

Արժ. Վրժն.

Ի նպաստ հայ յեղ. Միութեան ծախումն նուիրատուները (Շար. նախ. թիւէն եւ վերջ)

Ռատնա մահալէէն՝ Մ. Մշեցի 2, Այտոսէն՝ Յ. Պ. 5, Դ. Մ. 50 սթ., Էսկի Ջահրէն՝ Ս. Մ. 5, Գ. Պ. 5, Մ.

Մ. 5, Պ. 5, Գ. Մ. 5, Գ. Մ. 5, Գ. Մ. 5, Մ. Ս. 10, Մ. Ա. 5, Կ. Ֆ. 5, Ս. Գ. Մ. 5, Լ. Շ. 3, Պ. Գ. 2, Ա. Վ. 2, Ն. Տ. 2, Կ. Ա. 2, Ս. Օ. 2, Ե. Մ. 2, Ա. Պ. 2, Մ. Մ. Մ. 2, Գ. Ա. 1, Ե. Ֆ. 1, Գ. Կ. 1, Ե. Ա. 50 սթ.։ Դուրս 85.

Քառիկ Գարա Պաիր եւ Ռուսէլի գիւղի մէջ վաճառուած անդորագրեր՝ Մ. Տ. 5, Բ. 5, Ս. Ս. 3, Ս. Ի. 2, Շ. 2, Լ. Ի. 50 սթ., Բ. Վ. 1, Տ. Մ. 50 սթ., Ա. Ի. 1.50, Գ. 2. 1, Լ. Տ. 50 սթ., Մ. Մ. 1, Պ. Վ. 1, Գ. Ֆ. 1, Բ. Կ. 1, Ֆ. Ա. 50 սթ. Ռ. Է. 50 սթ., Գ. Տ. 1, Ա. Ֆ. 1, Կ. Ն. 1, Գ. Մ. 1, Բ. 40 սթ., Վ. 2. 50 սթ., Ի. Ս. 50 սթ., 2. Բ. 1, Գ. Պ. 50 սթ., Մ. Մ. 50 սթ., Վ. Ս. 50 սթ., Մ. Ս. 50 սթ. Դուրս 35.40:

Պուրկաղէն 97, Ենի Ջահրէն 18, խաղիւղէն 7, Ռատնա մահալէէն 2, Այտոսէն 5.50, Էսկի Ջահրէն 77.50, Քառիկ Գարա Պաիր եւ Ռուսէլի գիւղէն 35.40:

Համագումար 242 ֆր. 40 սանթիմ. Գ. Գ. — Ներկայ գրութեամբ կը յայտնենք նաեւ թէ մեր միջուկ հիմա, ի նպաստ Հայ Բ. Միութեան վաճառած տոմսերէն զատ մնացած բոլոր տոմսերը ջնջուած են։ Եթէ երեք մեր ստորագրութիւնը կրող սոյն տոմսերէն երեւան ելնին, կեղծ են։ Նոյնի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանական կարիւր թերթերու թղթակից Տ. Պ. Շթէրն որ երկար ժամանակ Կ. Պոլիս բնակած է, Պէտլինի մէջ ընդհուպ պիտի հրատարակէ «Եւրոպա» խորագրով եռահատոր գիրք մը, որ կը հաւաստեն թէ շատ հետաքրքրական տեղեկութիւններ պիտի պարունակէ թուրքիոյ վերաբերեալ, եւ դրդելու պիտի հանէ իր յայտնութիւններով։

— Ռուսահայ թերթեր կիմացնեն թէ Հիւսիսային Կովկասի լեռնականներէն ինքուները, Չէչէնները եւ Կաբարտինցիները հետեւեալ տեղեկութիւնները որպէս զի իրենց թոյլատրուի թուրքիա գաղթել։ Կըսուի թէ պիտի ընդունուի իրենց խնդիրքը պայմանով որ իրենց հողերը գրաւուին կառավարութենէն եւ իրենք հրաժարին կրկին Ռուսիա վերադառնալու իրաւունքէն։

— Շուգով կարի մեքենաներ, Գերմանիա Գայդեր եղբայր գործատունն սկսած է նորատեսակ կարի մեքենաներ պատրաստել, որոնք փոխանակ ոտքով կամ ձեռքով գործելու՝ շուգով կը գործեն։ Այսպիսի մեքենաներու առաւելութիւնը միայն այս չէ, այլ կարելի է երկու կարան միատեղ ընել։ Բայց պէտք է միտ դնել, որ այս կարի մեքենաները կտանեն թանձրութեան ու բարակութեան համեմատ այլեւալլ աստիճաններով կը պատրաստուին։

ԱԼՄԱՆԻ ԱՐԹԻՐԳԻԱՏԱ

Ալմանիա իմբերաթօրը վիճելով եազընլարտա Երուսաղէմի զիյաւրէթ իթմէք պէհանէսի իւլէ իքին. ճի տէֆա օլարագ Սթանպօլա վէ Մըըրա տախի ալիմէթ իտէճէք տիր։

Միւշարիլէյն իմբերաթօրն 10-12 սէնէ մուգատտէմ Սթանպօլա կէլմէսինտէն սօնրա կէօնա Սուլթան իլէ պէյիլիլէրինտէ սամիմի պիր մուհապպէթ հուսուլա կէլմիշ օլտուղընը թիւրք կազէթալարը մաղրուրանէ կէօսթէրմէքտէ իտիւլէր. վէ հազըգաթէն տէ թիւրք հիւքիւմէթինին սօն սէնէլէրտէ իճրա իթտիկի վահշիլիլէրտէ՝ մէտէնիլէթ ու ինսանիլէթէ գարշը՝ իմբերաթօր օլ տէրէճէ թիւրքիլին թարաֆընը իլթիգամ իթտիքի նիհայէթ պիր թագըմ էվրագը հավատիս վիլիլէմ իքին. ճիյէ Ապսիւլ վիլիլէմ ինվանը վէրտիլէր։

Վիլիլէմին Սուլթան իլէ մուհիպպանէ տօսթ օլմագ արգուսընընէ սէպէպէրտէն իլէրի կէլմիշ օլտըղը բէք աշըգտա տըր։ Իշթէ պու սէպէպէրտէն պիրիսի վէ պաշըճաւը թիւրքիլար Ալմանլար իլիւն պիր էքմէք թէքնէսի եարմագ, եանի՝ պուստան սօնրա օնպիլիլէրէն Ալմանիլարը թիւրքիանըն էն կիւզէլ չէհիլիլէրինէ տաղըլուպ էն թիւրքիլիլէ իշլէրի վէ ինշաթ զօնթուրաթլարընը էլտի իտէրէք, եէրլի թիւրքալարըն թիւրքիլիլէն սէքտէ վէրմէք վէ նիհայէթ մալիլէճէ թիւրքիանըն հաքիմի օլմագ էքքեարընա մէպնի տիր։ Վիլիլէմին շու իքինէի եօլճըղը պու սէպէպէլ օլուպ, թիւրքիա տալման թէքնիլիլէ պիր գաթ տահա արթըրմագ իսէտէ, տիկէր տէվլէթլէր՝ պախուսու՝ Ռուսիա վէ Ֆրանսա Ալմանլարըն շու կիտիշսթընա աշա էյի նաղարէ պագմալարար. ֆրանսըզ վէրուս նիմ ըէամի կազէթալար հիւքիւմէթլէրինին նաղարը տըգգաթընը տալթէթ իտէրէք, Ալմանլարըն թիւրքիա տալիլէրի կիթմէսինէ մանիլէր չըգարմագ իսթէյօրլար։ Սուլթան վիլիլէմի բէնտիսինէ տօսթ գազանմագ սէվիլիլէ իլէ, միւքիլին թիւրքիլիլէ վէ սէրվէթ մէնպալարընը էլի իլէ էճնէ պիլիլէրէ թէսլիմ իթմէքտէ վէ տիկէր թարաֆտան Րուսիանըն վէ պաղը տէվլէթլէրին խուսուլմէթինի բէնտիսինէ տալթէթ էյլէմէքտէ տիր. ասըլ եէրլի օսմանլը է. հալիսի իսէ՝ դատար մէմուրլարըն եէտի զուլմընտա էզիլմէքլէ պէրապէր, պուստան սօնրատէ մէտարը նաֆագա օլապիլիլէք թիւրքիլիլէրին Ալմանլարա թէսլիմ իտուպ, բէնտիլէր պիր գուրը էքմէք իլիւն էճնէպիլիլէրէ բէօլէլիք վէ հիւքիւմէթ մէմուրլարընա եէսիլիլէ իտէճէքլէր տիր։

